ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«28» «սեպտեմբեր» 2021 թ. № 380-Լ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 92-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Բնապահպանության նախարարի 2019 թվականի ապրիլի 23-ի «Շրջակա միջավայրի նախարարության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 92-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները՝

1) հրամանի հավելվածի 47-րդ կետը լրացնել նոր 9.1-ին ենթակետով.

«9.1 աշխատանքի ներկայանալիս սույն կարգով սահմանված ժամկետում ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:»:

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ գլխով"

«VII. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

62. Նախարարություն գլխավոր քարտուղարի տեղակալն իր իրավասության սահմաններում պատասխանատու է ապահովել.

ա. բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի ներկայանալու

անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը Նախարարության հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի ներկայանալիս.

բ. սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը:

63. Գլխավոր քարտուղարի տեղակալը համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում է տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), ով պարտավոր է խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում գրավոր տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:

64. Նախարարության աշխատողները առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի N 65-Ն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո յուրաքանչյուր 14 օրը մեկ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության, առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի N 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ (այսուհետ՝ սերտիֆիկատ), բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների:

Եթե աշխատակիցը գտնվում է 14 օրը գերազանցող արձակուրդում, ապա ՊՇՌ հետազոտության սերտիֆիկատը ներկայացնում է աշխատանքի ներկայանալու օրը:

ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ սեփական միջոցներով:

65. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված աշխատողը Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին է ներկայացնում է տվյալ պատվաստանյութի կիրառման հրահանգի համաձայն սահմանված դեղաչափերով (դեղաչափով) ամբողջական պատվաստումը հավաստող առողջապահության նախարարի 2021 թվականի մայիսի 27-ի N 2020-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ (տեղեկանք) (այսուհետ՝ պատվաստման սերտիֆիկատ), ինչը գրանցվում է համապատասխան գրանցամատյանում և պատճենը կցվում է աշխատողի անձնական գործին: Առաջին և երկրորդ դեղաչափերի միջև կոնկրետ պատվաստանյութի համար սահմանված ժամանակամիջոցում ամբողջական պատվաստում չունեցող աշխատողը չի ներկայացնում ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ: Կոնկրետ պատվաստանյութի

համար դեղաչափերի միջև սահմանված ինտերվալից ավել ժամանակամիջոցի դեպքում երկրորդ դեղաչափը չստացած և բժշկական հակացուցում չունեցող աշխատողը ներկայացնում է ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատ՝ համաձայն 64-րդ կետի պահանջի:

66. Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված պատվաստվելու բժշկական հակացուցումներ ունեցող աշխատողները Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պատվաստման բժշկական հակացուցումների մասին բժշկական փաստաթուղթ, տրված առողջության առաջնային պահպանման բժշկի կողմից, համաձայն առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի N 35-Ն հրամանի պահանջների:

67. Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար պետք է մեկ օրյա ժամկետում գրավոր տեղեկացնի գլխավոր քարտուղարի տեղակալին սույն կարգի 64-րդ կետով սահմանված ժամկետում ստորաբաժանման աշխատակցի կողմից ՊՇՌ հետազոտության սերտիֆիկատ չներկայացնելու մասին:

68. Սույն կարգի 64-րդ, 65-րդ և 66-րդ կետերով սահմանված փաստաթղթերի չներկայացման խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում, ինչի շրջանակներում նշանակված ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին խախտում թույլ տված անձը պարտավոր է հատուկ՝ մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացնել գրավոր բացատրության (զեկուցագրի և այլն):

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա.ՄԱԶՄԱՆՅԱՆ

9/28/2021

X

ԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Signed by: MAZMANYAN ANNA 5308800774

«28» սեպտեմբերի 2021թ.
ք. Երևան